ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 135-Ա

<<30>> հոկտեմբերի 2025 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0033-0029 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.001321 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ՀԵԿՏՈՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապեթության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-3-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը և նկատի ունենալով, որ քաղաքացի Արտակ Հեկտորի Խաչատրյանին /հետագայում՝ քաղաքացի/ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոցի թիվ 13/1 հասցեում գտնվող /ներկայումս Արկադի տեր-Թադևոսյան փողոց/ ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0033-0003 կադաստրային ծածկագրով 0.00363 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին /վկայական՝ 2600561, տրված 15.03.2011 թ/ հարակից 08-003-0033-0029 կադաստրային ծածկագրով 0.001321 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 13/6 հողամաս/ հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, հաշվի առնելով քաղաքացու 2025 թվականի հոկտեմբերի 27-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի Արտակ Հեկտորի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոցի թիվ 13/1 հասցեում գտնվող /ներկայումս Արկադի տեր-Թադևոսյան փողոց/ ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0033-0003 կադաստրային ծածկագրով 0.00363 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին հարակից 08-003-0033-0029 կադաստրային ծածկագրով 0.001321 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 13/6 հողամաս, Վկայական N 18072025-08-0032/, որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, այդ հողամասը ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, 0.001321 հեկտար հողամասի համար **10463** /տաս հազար չորս հարյուր վաթսուներեք/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Արտակ Հեկտորի Խաչատրյանին (անձնագիր՝ AT 0565788, տրված՝ 18.09.2020թ, 022-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ,Ձերժինսկու փողոց, 13 շենք, բնակարան 24)՝ ավտոտնակի սպասարկման համար:

2. Նշել, որ

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշիմից բխող իրավունքների պետական գրանցումը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 11	**դեմ՝ 0**	**ձեռնպահ՝0**
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------

Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՉԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	չի մասնակցել քվեարկությանը	----------	----------
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

<<30>> հոկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ